«ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ПАРТИЯ «МОЯ МОГУЩЕСТВЕННАЯ ОБЩИНА»
MY POWERFUL COMMUNITY PARTY

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Գյումրին աղետի գոտու վերածել են ոչ միայն երկրաշարժը և դրան հետևած ԽՍՀՄ փլուզումն ու պատերազմը, այլև բոլոր նրանք, ովքեր շահարկել են աղետն ու դրա հետևանքները: Քաղաքական գործիչները, որոնք բնակչության արդար դժգոհությունը փորձել են ծառայեցնել իրենց նպատակներին, բարերարները, որոնք, սեփական եսասիրությունը բավարարելով, բնակչությանը դատապարտում էին մուրացկանության, տարատեսակ չինովնիկներն ու խաբեբաները, որոնք օգնության անվան տակ զբաղված էին թալանով:

Չնայած այդքան փորձություններին՝ Գյումրին կա: Ու կա ոչ թե նմանատիպ մարդկանց շնորհիվ, այլ ի հեճուկս նրանց արկածախնդրության: Ի հեճուկս բոլոր նրանց, ովքեր Գյումրին ու աղետը սարքել էին կթու կով:

Մենք ոչ թե հավատում ենք, ոչ թե վստահ ենք, այլ գիտե՛նք, որ Գյումրին կարող է հառնել: Գյումրին կարող է վերականգնել հայրաքաղաքի, արհեստի ու արվեստի, սիրո և մշակույթի, թատրոնի ու կինոյի, արդյունաբերության, հոգատարության, հյուրասիրության, հումորի, ջերմության, զարգացող ու վերածնվող համայնքի իր դեմքը:

Գյումրին կարող է ոչ միայն դադարել լինել սուբսիդավորվող քաղաք, այլև դառնալ օրինակելի այնպիսի համայնք, որն ի վիճակի է ֆինանսապես օգնել մյուսներին: Գյումրին կարող է դոտացիա ստացողից դառնալ դոնոր համայնք: Միակ բանը, որ կարող է դրան խանգարել, համայնքից բարձր կանգնած հանրապետական հաստատություններն ու չինովնիկներն են, որոնք, կոչված լինելով օգնել համայնքներին, փաստացի օգտագործում են համայնքները որպես մանրադրամ՝ սեփական իշխանությունը պահելու համար:

Գյումրու վրայից աղետի գոտու պիտակը պիտի վերջնականապես հանենք: Հատուկ հիմնադրամի միջոցով կյանքի կկոչենք հեռանկարային տարբեր ծրագրեր: Լենինականի համբավը, ծիծաղը, մթնոլորտն ու լավատեսությունը պետք է հետ բերենք Գյումրի: Քաղաքը պիտի դառնա ուրախ ու ժամանակակից փառատոների շուրջամյա կենտրոն: Մեր քաղաքի տոնը, մեր երգիչներն ու թատերական խմբերը, ֆայտոնը, արհեստները, արվեստը, նույնիսկ հումորը, քյալլեն ու պոչը պիտի ժամանակակից մատուցմամբ Գյումրի բերեն տասնյակ հազարավոր զբոսաշրջիկների: Քաղաքը պիտի ապրի ու շնչի ուրախ ռիթմերով: Լավ տրամադրությունը պիտի դառնա քաղաքի, մեր ջահելության կենսառիթմն ու ապրելակերպը:

Իմ սիրելի՛ գյումրեցիներ, դուք հարցնում եք.

1. Բա էս գյոզալ քաղաքը չպիտի՞ կարողանա զարգացման համար այնքան փող ստեղծել, որ մենք մեր ձեռքով մեր խնդիրները լուծենք:

2. Գյումրին բա չունենա՞ ժամանակակից ու մատչելի տրանսպորտային ցանց: Բա ցույց չտա՞նք, որ նման ցանց ստեղծելու համար պարտադիր չէ աշխարհի բոլոր հիմարություններն անել:

3. Գյումրու նման քաղաքը բա չունենա՞ իր Փառքի ճեմուղին, որտեղ կտեղադրվեն մեզ փառք ու պատիվ բերած բոլոր անվանի գյումրեցիների կիսանդրիները: Մեր հյուրերին երկար-բարակ պատմելու փոխարեն՝ բա չտանե՞նք Փառքի ճեմուղի, որ հա՛մ քաղաքի համն ու հոտը զգան, հա՛մ էլ հասկանան, որ, իրոք, գլուխ գովելու տեղ ունենք:

4. Բա չփորձե՞նք ամեն ջանք գործադրել, որ «Ազգային» մարզադաշտը կառուցվի հենց Գյումրիում: Ի՞նչ նոր հաջողություններ կլինեն, եթե տարբեր տարիքային խմբերի ֆուտբոլի ազգային հավաքականներն իրենց հանդիպումներն անցկացնեն հայրաքաղաքում: Մեր քաղաքը խերով քաղաք է:

5. Գյումրուն վայե՞լ է անխնամ գերեզմաններ ունենալը. քաղաքն իր խնամքի ու հոգատարության տակ պիտի վերցնի անտեր մնացած անխտիր բոլոր գերեզմանները. ոչ մի լքված ու անխնամ մնացած գերեզման Գյումրիում չպիտի լինի: Մեզ չի սազում:

6. Բա չներդնե՞նք համայնքային ծառայությունների միասնական էլեկտրոնային հարթակ, որ մի թույլտվություն, մի տեղեկանք ստանալու համար մարդը տասը դուռ չթակի, ժամերով չինովնիկների դռների դիմաց հերթ չկանգնի, չասեն՝ ընդմիջում է, գնա՛, վաղը կգաս, չասեն՝ գնա՛, տեղեկանք բե՛ր, քեզ տեղեկանք է պետք: Համայնքային բոլոր ծառայությունները բա չմատուցվե՞ն մեկ պատուհանի սկզբունքով՝ էլեկտրոնային, մատչելի ու թափանցիկ եղանակով: Մենք ինչքան ադաթի ու ավանդույթի, այդքան էլ նորարարության ու պրոգրեսի քաղաք ենք:

7. Բա թափառող շների ու բազմաբնակարան շենքերում կրծողների խնդրի լուծումը չդարձնե՞նք քաղաքապետարանի ամենօրյա հոգսն ու ռեալ լուծենք խնդիրը: Մեր քաղաքին վայե՞լ են այսքան թափառող շներն ու կրծողները. ՔՊ-ն մեզ բավարար չէ՞:

8. Բա Գյումրիում չդնե՞նք ու ամեն տարի մի հատ շատ գեղեցիկ և աչքի ընկնող շենք կառուցենք, բնակարաններն էլ տրամադրենք կրթության, մշակույթի, արվեստի, սպորտի ու այլ ոլորտներում ամենամեծ արդյունքը գրանցած, մեր քաղաքին հոչակ և ճանաչում բերած, գալիք սերնդի համար կատարելատիպ հանդիսացող մեր երիտասարդներին: Բա գյումրեցի երեխաներն իրենց աչքով չտեսնե՞ն, թե ում է պետք ձգտել նմանվել, ու ինչ ճանապարհով է պետք կյանքում առաջ գնալ:

9. Ամեն տարի բա գոնե 3 դրամաշնորհ չտա՞նք գյումրեցի այն բացառիկ ու գերտաղանդավոր երիտասարդներին, որոնք, ավարտելով քաղաքի դպրոցներն ու բուհերը, կընդունվեն աշխարհի ամենավարկանիշային 10 համալսարաններից մեկը՝ կրթությունը շարունակելու համար:

10. Գյումրին միայն այստեղ ապրողների՞ս քաղաքն է: Բա չստեղծե՞նք «Հայրաքաղաք Գյումրի» վիրտուալ հարթակն ու Գյումրու քաղաքացիության վիրտուալ անձնագրեր տանք բոլոր գյումրեցիներին, այդ թվում՝ արտերկրում բնակվող, որպեսզի մեծ կարևորություն ու հնչեղություն ունեցող խնդիրները պետք եղած պահին դնենք էլեկտրոնային հանրաքվեի, բոլոր գյումրեցիների կարծիքն իմանանք, հետո որոշումներ կայացնենք:

11. Բա հայկական սպորտի սիրտը հանդիսացող Գյումրիում տաղանդավոր երեխան փո՞ղ ման գա, որ պարապի: Մեր հրաշք մարզիչներն իրենց նվաստացա՞ծ զգան, որ կոպեկներ են ստանում: Սրա ի՞նչն է մեզ սազական:

12. Բա չկառուցե՞նք հենց մեր քաղաքում մի մեծ, փակ «Ակվապարկ», որպեսզի գյումրեցիներին ու մեր զբոսաշրջիկներին հնարավորություն տանք ամառ-ձմեռ ընտանիքներով վայելելու ջրային հանգիստը:

Կհարցնեք՝ իրատեսակա՞ն է այս ամենը: Միանշանակ, այո՛: Կհարցնեք՝ կանե՞ք, չե՞ք խաբի: Խաբողն ու չանողը ՔՊ-ական լինի: Ամեն ինչից բացի՝ թասիբի հարց է. մենք հենց դրա համար ենք գալիս:

«Իմ հզոր համայնք» կուսակցության
վարչության նախագահ՝ **Սպարտակ Թարթիկյան**

Կ.Տ.
ՊՄՄՕ
MPCP
00234145